

**«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ՃԱՆԱԶՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»**

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция
**«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ
МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ
РЕСПУБЛИКИ АРЦАХ»**
14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

**“ISSUES AND PROSPECTS OF THE
ARTSAKH REPUBLIC’S
INTERNATIONAL RECOGNITION”**

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՍՍ-ՕՄՍՏԱ-ՍՅՏՏԱ
ԵՐԵՎԱՆ-ԵՐԵՎԱՆ-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի
Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета
Университета Месроп Маштоц в Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council
of the Mesrop Mashots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ

Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Գազիյան**

Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան**, պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет

Председатель: д.ю.н., проф., академик НАН РА Гагик Казинян

Члены: д.п.н., проф. Грант Аванесян, д.и.н., проф. Валерий Аванесян, д.п.н., доцент Хачик Галстян, д.ю.н., проф. Владислав Груздев, д.ф.н., проф. Сократ Ханян, д.ю.н., проф. Ашот Хачатрян, д.п.н., проф. Мариам Маргарян, д.э.н., проф. Айк Саргсян, д.п.н., проф. Гарик Керян, к.и.н., доц. Григор Баласания, к.и.н., доц. Нелли Багдасарян, к.э.н., доц. Евгения Айриян, к.ю.н., доц. Анаит Манасян, к.п.н., доц. Витя Ярамишян, к.э.н., доц. Карен Персисян, к.ю.н. Сирануш Петикян

Секретарь: к.ю.н. Аветик Арутюнян

Editorial board

Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician

Editors: Hrant Avanesyan, Psy.D., Prof., Valeri Avanesyan, Doctor of History, Prof., Khachik Galstyan, Dr sc. pol., Assoc. Prof., Vladislav Gruzdev, LL.D., Prof., Sokrat Khanyan, Doctor of Philology, Prof., Ashot Khachatryan, LL.D., Prof., Mariam Margaryan, Dr sc. pol., Prof., Hayk Sargsyan, Dr sc. ec., Prof., Garik Keryan, Dr sc. pol., Prof., Grigor Balasanyan, Candidate of History, Assoc. Prof., Nelly Baghdasaryan, Candidate of History, Assoc. Prof., Yevgenya Hayriyan, Candidate sc. ec., Assoc. Prof., Anahit Manasyan Candidate of Law, Assoc. Prof., Vitya Yaramishyan, Candidate of Psy. sc., Assoc. Prof., Karen Nersisyan, Candidate sc. ec., Assoc. Prof., Siranush Petkiyan, Candidate of Law

Secretary: Avetik Harutyunyan, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի կյուբերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի կյուբերը:

В сборник включены материалы 2-ой международной молодежной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

**ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ Ի ԲՐԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ
ՄԻՋՈՑ. ՇՈՒՇԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (19-րդ դար)**

Քնար Հարությունյան

*Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, կրտսեր գիտաշխատող
knarbanaser@gmail.com*

Տարևիկ Հարությունյան

*Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա,
Արվեստաբանություն բաժնի մագիստրոս
harutyuniant@gmail.com*

Գիտ. դեկ.՝ պ.գ.դ. Գ.Տեր-Վարդանյան

Մեր պատմության մեջ հայ արուեստն ու մշակույթն են, որ ունեն հիմնական արժեք միջազգային քաղաքակրթության համար: Իմ համոզումն է, որ քաղաքական դեպքերի թևարկումից աւելի պետք է ընդգծել հայ ժողովրդի բերած նպաստը մարդկային քաղաքակրթության՝ արուեստի և մշակույթի գծով:

հայագետ, արվեստաբան, բյուզանդագետ պրոֆ. Սիրարիկի Տեր-Ներսեսյան, Հայրենիքի ձայն, 1970, N 23

Որևէ երկրի միջազգային ճանաչման գործում քաղաքական և տնտեսական գործոնների ունեցած դերից ու ազդեցությունից ոչ պակաս կարևոր է մշակութայինը: Համաշխարհային պատմության մեջ բազմաթիվ են դեպքերը, երբ մշակույթը, մշակութային ու հոգևոր արժեքները ճանաչելի են դարձնում ազգերին, անգամ երբ նրանք հանգամանքների բերումով կորցրել են պատմական հայրենիքը կամ պետականությունը: Ավելին, նրանք դառնում են այն հզոր գործոններից, որոնք կարող են նպաստել երկրի միջազգային ճանաչմանը, և ճիշտ գործածելով մշակութային արժեքների ներկայացումը միջազգային հանրությանը՝ կարելի է հասնել մեծ արդյունքների՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մշակույթն ու արվեստը համամարդկային արժեքներ են՝ ընդունելի և ներկայանալի անկախ քաղաքական հայացքներից ու հարաբերություններից: Ամենաարագ ազդեցությունն ունեցող, առաջին հայացքից քաղաքականությունից չեզոք և դրանով ավելի ընդունելի, հասարակության տարբեր շերտերին ուղղված, մարդու հոգևոր ներաշխարհին անմիջականորեն առնչվող և մտածել տվող այս արժեքներն իրականում շատ ավելի լուրջ հնարավորություններ ունեն քաղաքական ասպարեզում, քան օրինակ որևէ քաղաքական գործչի ելույթ: Ի վերջո, այս արժեքներն են ներկայացնում տվյալ ազգին իր պատմությամբ, հոգեկերտվածքով, անցած ուղով, առանց որևէ միջնորդի, բաց և անկեղծ: Ու մի կարևոր հանգամանք ևս, մշակույթի ու արվեստի մեջ կեղծը, պարտադրվածը շատ արագ բացահայտվում է, առանց մեծ ջանքերի, արվեստի ինքնամաքրման ճանապարհով: Այս է պատճառը, որ կարծում ենք՝ այս գիտաժողովում պետք է խոսել մշակույթի, հոգևորի ունեցած դերի և նշանակության մասին Արցախի հանրապետության միջազգային ճանաչման ասպարեզում՝ որպես օրինակ վերցնելով արցախյան հսկայածավալ հոգևոր գանձարանի միայն մի փոքրիկ հատված՝ գրատպությունը¹,

¹ Պետք է նշել, որ հենց գրատպությանն անդրադառնալը պատահական չէ. բանն այն է, որ Արցախի ներկայիս հոգևոր կյանքի այլ ասպարեզներ, ինչպիսիք են կերպարվեստը, երգը,

նրա անցած ուղին, ներկան, հեռանկարները և կարևորությունը ոչ միայն ներքին կյանքում, այլև արտաքին հարաբերություններում:

Գուտենբերգի տպագրության գյուտից ընդամենը կես դար անց սեփական անկախություն, պետականություն չունեցող հայ ժողովուրդը ունեցավ իր տպագրությունն ու տպագիր գիրքը՝ կանխելով անգամ եվրոպական որոշ երկրների: Եվ հայ ժողովրդի պատմության այդ մռայլ դարաշրջանում հայ գրքի տպագրությունը դարձավ այն լույսը, որն առաջնորդեց, հույս տվեց և որի հետ իրավամբ կապվեցին մեծ նպատակներ, ինչպես տեսական-գաղափարական, այնպես էլ գործնական, ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական¹: Այն մեր ինքնությունը ներկայացնող հզոր միջոցներից մեկն է դարեր շարունակ: Այս է պատճառը, որ հայ տպագրական գործի հիմնումը, տարբեր վայրերում նրա անցած ուղին և հայ գրքի պատմությունը խորապես ուսումնասիրվել է: Ու թեև հայ գրքին նվիրված ուսումնասիրություններում², նաև Արցախին ու Շուշիին նվիրված աշխատություններում³ միշտ հիշվել են այստեղ եղած տպարանները, տպագրված գրքերը և այլն, բայց հենց այս հարցը ներկայացնող, արժևորող, մանրամասն մի ուսումնասիրություն, որը բացահայտում է ոչ միայն կենտրոնի գիտական և մշակութային դերը, այլև ստեղծման նախապայմանները, քաղաքական և տնտեսական հանգամանքներ և այլն, ինչպիսիք վաղուց ի վեր կան բազում այլ տպագրական կենտրոնների վերաբերյալ⁴, չկա: Ամփոփ ներկայացնելով Արցախի տպագրության առաջին 100ամյակը՝ փորձենք որոշել նրա դերը, ինչպես նաև ներկայիս վիճակը, հեռանկարները և քաղաքական հնարավոր դերակատարումը:

Շուշին Կովկասում հայկական տպագրության երկրորդ կենտրոնը դարձավ Էջմիածնից հետո: Շուշիում 19-րդ դարում իրար հաջորդելով կամ զուգահեռաբար գործել են 8 տպարան՝ Բողոքական քարոզիչների, Ղարաբաղի Մահուր թեմի, Գ. Ս. Յովանյանցի, Յայոց հոգևոր տեսչության, Սիրզաջան Սահտեսի Յակոբյանցի, Մինաս Տարղլիճյանցի, Միքայել Յովսեփյանցի, Ս. Էջմիածնի տպարանները: Տպարանները պատկանել են ինչպես որոշ հաստատությունների, այնպես էլ անհատների, այսինքն՝ այս գործով շահագրգռված են եղել Շուշիի հասարակության ամենատարբեր խավեր:

Առաջին տպարանը հիմնադրվել է Շվեյցարիայի Բազել քաղաքի «Ավետարանական քարոզչական ընկերության» ներկայացուցիչներ Ավգուստ

թատրոնը, բանդակագործությունը և այլն, բավականին մեծ առաջընթաց ունեն և աշխարհին ներկայանալով՝ նպաստում են Արցախի ճանաչմանը միջազգային տարբեր հարթակներում: Մեր նպատակն է ցույց տալ, թե ինչ բարձր առաջընթաց է ունեցել այն սկզբնավորման շրջանում և ինչ հեռանկարներ ու դերակատարում կարող է ունենալ այժմ:

¹ Ինչենք միայն Մադրասում տպարանի հիմնումը և նրա գործունեությունը, որը նախևառաջ մի միջոց էր պետության ստեղծմանն ուղղված, այդ տպարանի և գրատպության միջոցով գաղափարները տարածելու:

² Իշխանյան Ռ., Յայ գրքի պատմություն, հատոր 1. Յայ տպագիր գիրքը 16-17-րդ դարերում, Ե., 1977: Լեոնյան Գ., Յայ գիրքը եւ տպագրության արվեստը. պատմական տեսություն և սկզբից մինչև 20-րդ դարը, Ե., 1946: Լեո, Յայկական տպագրություն, Թիֆլիս, 1901-1902: Չարպիանյան Գ., Պատմություն հայկական տպագրության, Վենետիկ, 1895: Դավթյան Յ., Յայ գիրքը 1801-1850 թվականներին, Ե., 1967: Յայ գիրքը 1851-1900 թվ.ին, կազմեցին՝ Ոսկանյան Ն., Սավայան Ա. և ուրիշներ, Ե., 2001:

³ Բարխուտարեանց Մ., Արցախ, Բազու, 1895: Ուլուբաբյան Բ., Արցախի պատմություն, Երևան, 1994: Սևյան Վ., Շուշի, Ե., 1991: Բակուր, Շուշի բերդաքաղաքը, Ե., 2000: Աբրահամյան Յ., Արցախը 18-19-րդ դարերում, Երևան, 2015:

⁴ Կորկոտյան Զ., Յայ տպագիր գիրքը Կոստանդնուպոլսում, Երևան, 1964, Մինասյան Լ., Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը, Նոր Ջուղա, 1972, Ճեմճեմեան Ս., Յայ տպագրութիւնը եւ Դոմըն, Վենետիկ, 1989:

Դիտորհիսի ու Ֆիլիցիան Չարեմբայի կողմից¹, որոնց 1823 թվականին ռուսական կառավարությունը թույլատրել էր հաստատվել Շուշիում՝ քարոզչության նպատակներով: Այն իրականացնելու համար նրանք հայերեն դպրոց եւ տպարան են բացում: Սակայն երբ սկսեցին հետևորդներ² ունենալ և ընդարձակվել, ազգային եկեղեցու հետևորդներն ու հոգևորականները դժգոհություն բարձրացրին, և 1831ին Եփրեմ Կաթողիկոսը դիմեց կառավարությանը: Դիմումը կրկնեց Զովհաննես Կարբեցին, մինչև Ռոզեն կուսակալը գործին կարևորություն տվեց, և 1835ին արգելվեց բողոքականների ամեն տեսակ գործունեությունը հայերի մեջ: 1837ին քարոզիչները Շուշից հեռացվեցին³: Թեև բողոքականների քարոզչությունը հասկանալիորեն մերժվեց և չկատարեց նախապես ծրագրված դերը, սակայն նրանց տպարանը նշանակալից եղավ ինչպես Շուշիի, այնպես էլ հայ տպագրության պատմության համար առհասարակ: Այն փաստորեն ամբողջ Կովկասում հայկական տպագրության երկրորդ օջախն էր Էջմիածնից հետո, և նրա հիման վրա Շուշիում շարունակվեց տպագրական գործը: Այս տպարանը հիմնվեց 1827ին և աշխատեց մինչև 1833ը: Այս ընթացքում տպագրվեցին 24 գիրք, որոնցից 21-ը դավանաբանական-թարգմանականսան գործեր են, 3-ը՝ քերականական աշխատություններ, ինչը վկայում է Արցախում քերականական աշխատությունների, մայրենի լեզվի նկատմամբ հատուկ վերաբերմունքի մասին:

Ավնիայտ է, որ տպարանը ստեղծվել էր քարոզչական նպատակով, բայց արցախահայությունը այն ընդունել էր որպես գիտական նորամուծություն, հասկացել արժեքը և չէր արգելել դրա մուտքը: Ինչպես ժամանակակիցներն են վկայում, անհանգստություն առաջացել է միայն այն ժամանակ, երբ բողոքականությունը սկսում է հետևորդներ ունենալ: Բողոքականների գործունեությունն արգելվում է, իսկ տպարանի հիման վրա ստեղծվում է նորը:

Երկրորդ տպարանը սրա հիման վրա ստեղծված Ղարաբաղի հոգևոր թեմի տպարանն է՝ Բողոքականների հեռացնելուց հետո Բաղդասար մետրոպոլիտը, հասկանալով տպագրության արժեքն ու դերը ազգի հոգևոր, մշակութային, քաղաքական կյանքում, ինչպես նաև ժամանակի պահանջն ու թելադրանքը, գնում է տպարանը, որն աշխատում է 1837-40 թթ.ին՝ տպագրելով 11 գիրք⁵:

Բեդուն է եղել Զայոց հոգևոր տեսչութեան (Զայոց հոգևոր Վարչութեան, Զայոց հոգևոր դպրոցի) գործունեությունը 1864-1900 թթ.ին տպագրելով 36 գիրք,

¹ Տես Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 185: Աբրահամյան Զ., նշվ. աշխ., էջ 292:

² Զայեթի նախնական ոգևորությունը և ներգրավվածությունը Մ. Օրմանյանը բացատրում է այսպես. «Զայեթն ալ նորութեանց հետամուտ՝ շուտով գրաւուեցան, մինչեւ իսկ եկեղեցականներ ալ անոնց համակրեցան եւ յարեցան» (Մ.Օրմանյան, Ազգապատում, Երուսաղէմ, 1927, էջ 745):

³ Տես Մ.Օրմանյան, նշվ. աշխ., էջ 747:

⁴ Կոչվել է նաև «Նորին բարձր սրբազնութեան», «Բարձր սրբազան ասպետափառ մետրոպոլիտին Բաղդասարայ», «Վիճակաւոր առաջնորդին Ղարաբաղու բարձր սրբազան Բաղդասարայ»:

⁵ Այս տպարանի առաջին գրքի՝ Բայրոնի Շիլիոնեան կալանաւորի-ի մասին կան միայն տեղեկություններ, իսկ գիրքը չկա: Տպարանն արժեքավոր գրքեր է տվել աստվածաբանական՝ Եփրեմ Խուրի Ասորի, Գիրք աղօթից (1838), Խորհրդատետր (1838), Մաշտոց (1840), քերականական՝ Սալլանթեան Մ., Զամառօտութիւն փոքր քերականութեան գրաբար լեզուի Զայոց (1839), Տեր-Յոհաննեսն իւ., Զամառօտ քերականութիւն (1839), պատմություն՝ Եսայի Զասան-Ջալալեան, Պատմութիւն կամ յիշատակ ինչ-ինչ անցից դիպելոց յաշխարհին Աղուանից (1839), փիլիսոփայություն՝ Առաջին մասն փիլիսոփայութեան, որ ասի Տրամաբանութիւն (1840):

որոնցից նշանակալիներն են Լեոյի «Իմ յիշատակարանը» (1890), «ՎԷ՛պ, թե պատմութիւն» (1887), պատմվածքները, Մ. Աբեղյանի բանաստեղծությունները՝ «Նմուշներ» (1888), հետաքրքիր են Կոստանտին Մելիք-Շահնազարյանի «Ծխախոտը եւ իւր վնասները» (1888), «Ոգելից ըմպելիների վնասակարությունը» (1889) իրատական գրքերը, մյուսները հիմնականում թարգմանություններ են:

Ամենաշատ գրքեր տպագրվել են Միրզաջան Մահտեսի Հակոբյանց տպարանում 1879-1900 թթ.ին՝ 54 գիրք: Հասկանալի է, որ այստեղ են 1-ին անգամ տպագրվել Բաֆֆու «Խեթքը» (1881), Մ. Աբեղյանի «Դաւիթ եւ Մհեր: Ժողովրդական դիւցազնական վեպ» (1889), Ա. Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արուեստը: Զննական տեսութիւն» (1891): Այս տպարանում տպագրվել են նաև համաշխարհային գրականության նշանավոր երկերի թարգմանություններ՝ Սաֆո «Պոեմա» (1897), Եվրիպիդես «Հայրենասեր Իֆիգենիա» (1899), Ֆիրդուսի «Ռոստամ եւ Սոհրաբ» (1893), «Չոհրակ Բիւրասափ ածրահակը» (1894), «Սիաւուշ» (1894):

Գրքերի քննությունից ակնհայտ է դառնում հատուկ ուշադրությունը երեխաների կրթության, մանկական գրականության նկատմամբ: Այսպես՝ 1886 և 1891 թթ.ին 2 անգամ հրատարակվում է «Մայրենի լեզու: Այբբենարան հայ մանուկների համար», և 1891 թ.ին մեկ այլ «Այբբենարան հայ մանուկների համար», 1895 թ.ին՝ «Հայոց պատմութիւն (պատկերազարդ ձեռնարկ)» (Ճաղաքբեգեան Յ.): Այստեղ նաև տպագրվել են մի շարք ինքնուրույն և թարգմանական գրքեր՝ ուղղված մանուկներին և պատանիներին. Չարլզ Դիկենսի «Ծննդեան պատմութիւններ» (1891), «Պօլկովիկի Ֆրոյից (վեպ մանկական)» (1884), Վ. Յոֆմանի «Աբրահամ Լինկոլն, ստրուկների ազատողը. երեխաների համար» (1888), Գ. Չառափեանի «Ռսկեդեր տղան եւ իմաստուն արջիկը» (1900) և այլն¹:

Ընդհանուր առմամբ 139 գիրք է տպագրվել Շուշիի 8 տպարանում, 19-րդ դարում, որոնց ընդհանուր քննությունը ցույց է տալիս Շուշիի մշակութային, հոգևոր կյանքի բարձր մակարդակը, գրատպության և կրթության արժեւորումը, ինքնուրույն ստեղծագործությունների կողքին համաշխարհային դասական և արդի գրողների գործերի թարգմանությունների հրատարակության կարևորելը: Այս գրքերն այսօր գտնվում են ինչպես Հայաստանի և Արցախի գրադարաններում, անհատների ձեռքին, այնպես էլ աշխարհի տարբեր երկրների գրադարաններում ու գրացանկերում: Սա ևս մեկ անուրանալի փաստ է Շուշին և Արցախը տարբեր ազգերի կողմից ընդունելու և գիտականորեն ու մշակութային առումով ճանաչելու որպես հայ ժողովրդի, հայ մշակույթի, հայ ինքնության մի կարևոր կենտրոն: Իսկ այսօր այդ դարավոր ավանդի շարունակությունը միմիայն կնպաստի այդ փաստի ամրագրմանն ու տարածմանը, քանի որ գիրքը մտնում է աշխարհի ամենատարբեր երկրներ ու գրադարաններ, հայտնվում մարդկանց ձեռքին՝ դառնալով յուրօրինակ թղթային դեսպաններ:

Մյուս կողմից էլ նկատենք, որ այս տպարանները գործում էին ինքնուրույն պետականություն չունեցող երկրում, հետևաբար գուրկ էին պետական

¹ Մնացած 4 տպարանները 1-3 գիրք են տպագրել. Մինաս Տարղիճյանց տպարանը 1854 թ.ին ժամագիրք և Էֆիմերտի, Յ. Հովնակյանցը՝ 1870 թ.ին 1 Աւետարան, Միքայել Հովսեփյանցը՝ 1894 թ.ին 1 թարգմանական վեպ աշխարհաբարով՝ Ֆլորիան ժան Փիեր «Նումա Պոմպիլիոս Հռոմվի 2-րդ թագաւոր», Ս. Էջմիածնի տպարանը՝ 3 գիրք 1858, 1859, 1863 թթ.: Եվս 7 գիրք կան, որոնց տպարանային պատկանելությունն անհայտ է, քանի որ նշումները բացակայում են, բայց Շուշիում տպագրված լինելը նշված է:

աջակցությունից, բայց բավականին բեղուն արդյունք են տվել: Այսօր՝ 21-րդ դարում, կարելի է ենթադրել, թե պետական աջակցությամբ և բարերարների հովանավորությամբ ինչպիսի մեծ թափ կարելի է հաղորդել այս գործին, որում Շուշին 2-րդն էր ամբողջ Կովկասում դեռևս 19-րդ դարում: Անշուշտ, այսօր Արցախին նվիրված բավականին արժեքավոր աշխատություններ կան ինչպես հայերի, այնպես էլ օտարերկրացիների կողմից պատրաստված, որոնք իրավամբ նպաստում են Արցախի ճանաչմանն ու իբրև հայ մշակույթի խոշոր օջախի ընկալմանը (հատկապես շեշտեք Կիմ Բակչիի «Արցախի հոգևոր գանձերը», Ե., 2015, «Ղարաբաղ. տարանցում Շուշի-Երևան» գիրք-պատկերապատումը, հեղինակ՝ Տ. Մանգասարյան, Ե., 2015), բայց եթե սրան գումարվի նաև հենց Արցախում հրատարակչական գործի խթանումը և այսպիսի աշխատությունների տպագրումը հենց այստեղ, արդյունքը, կարծում ենք, շատ ավելի մեծ կլինի: Սրան պետք է նպաստել բոլոր միջոցներով՝ սկսած տպարանների հիմնումից, գրքերի տպագրությունից մինչև միջազգային տարատեսակ ցուցադրություններում և միջոցառումներում դրանք ներկայացնելով ու դրանց մասին ինչպես հայկական, այնպես էլ օտար ՉԼՄ-ներում, նաև համացանցում տեղեկատվության տարածմամբ: Ի վերջո, 21-րդ դարում հնարավորություններն այնքան են մեծացել, որ յուրաքանչյուրս իր փոքրիկ ներդրումն ունենալով կարող է նպաստել նման կարևոր գործի: Այդ ներդրումներից, առաջին քայլերից մեկն էլ կարելի է համարել նմանատիպ զեկույցներով գրքի ու գրատպության արժևորումը, դրա ծառայեցումը Արցախի հանրապետության միջազգային ճանաչման գործին:

Քնար Հարությունյան, Տաթևիկ Հարությունյան
**ԳՐԱՏՊՈՒԹՅՈՒՆ ԻՐԻԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆՆԱԶՄԱՆ ՄԻՋՈՑ.
ՇՈՒՇԻՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ (19-րդ դար)**

*Բանալի բառեր՝ տպագրություն, Շուշի, տպագրական կենտրոն,
հրատարակչություն*

Հայերեն տպագրությունը սկիզբ է առել Գուստենբերգի գյուտից մոտ կես դար անց և արագ տարածում է գտել աշխարհի տարբեր անկյուններում: 19-րդ դարում Շուշին դարձավ հայկական տպագրության երկրորդ կենտրոնը Կովկասում Ս. Էջմիածնից հետո: Մատենագիտական և աղբյուրագիտական ուսումնասիրությունների, Շուշիում տպագրված գրքերի հիման վրա մենք ամփոփ ներկայացնում ենք Շուշին որպես 19-րդ դարի տպագրական կենտրոն, այնտեղ գործող ութ տպարանների պատմությունը, նրանց դերը հայերի մշակութային կյանքում և այնտեղ հրատարակված 139 գրքերը՝ համեմատելով այսօր Արցախի Հանրապետության համար տպագրական գործի ունեցած կարևորության հետ:

Кнар Арутюнян, Татевик Арутюнян
**КНИГОПЕЧАТАНИЕ КАК СРЕДСТВО МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ
ГОСУДАРСТВ: ШУШИ КАК ЦЕНТР КНИГОПЕЧАТАНИЯ (19 век)**

Ключевые слова: *книгопечатание, Шуши, книги, опубликованные в Шуши, типографский центр, издательство*

Армянское книгопечатание получило начало примерно через пол века после изобретения Гутенберга и стало очень быстро развиваться в разных уголках мира. В 19 веке Шуши стал вторым армянским типографским центром на Кавказе после Св. Эчмиадзина. На основе библиографических и исторических материалов, а также опубликованных в Шуши книг мы коротко представили в данной работе Шуши как центр книгопечатания 19 века, историю восьми издательств, их роль в культурной жизни армян и 139 опубликованных книг.

Кнар Harutyunyan, Tatevik Harutyunyan
**THE TYPOGRAPHY AS A MEANS OF INTERNATIONAL RECOGNITION OF
STATES: SHUSHI AS A CENTER OF TYPOGRAPHY (the 19th century)**

Key words: *typography, Shushi, books printed in Shushi, publishing houses*

The armenian typography was originated about half century ago after Gutenberg's invention and started develop very quick in the various countries. In the 19th century the typography was established in Shushi and Shushi became the second center of armenian typography in the Caucasus after the Holly Echmiadzin. According to bibliographic and historical materials, also based on the books published in Shushi, we briefly present Shushy as a center of typography of 19th century, history of 8 publishing houses, their role in the cultural life of Armenians and 139 published books in our report.